**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 02.07.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2021/149

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Սպասարդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սպասարդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Գևորգյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9257-2021 գրությամբ «Սպասարդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

# ՊԱՐԶԵՑ

## 1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 02.06.2021թ.-ի թիվ 08.1//11826-2021 գրության հիման վրա, 09.06.2021թ.-ին «Սպասարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 09.06.2021թ.-ին:

09.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/149 համարի ծածկագիրը:

16.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

## 2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 02.06.2021թ.-ի թիվ 08.1//11826-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2021 թվականի մայիսի 25-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով կազմակերպված ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Սպասարդ» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2021 թվականի մայիսի 25-ին առաջարկվել է*

*«Սպասարդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն այն չի շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:*

*Ելնելով վերոգրյալից, կից ներկայացնում եմ «Սպասարդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները, վերջինիս հայտը, https://armeps.am/ համակարգի միջոցով ուղարկված շտկման մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ուղարկված շտկման մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը:*

*Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) և գ) ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սպասարդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

**3. <u>«Սպասարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 09.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Սպասարդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9257-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 10.06.2021թ.-ին ներկայացվելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

*«Հայտնում եմ Ձեզ, որ մասնակցել եմ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով հրավերին:*

*Հավելված 2-ում տեղի է ունեցել վրիպակ, մասնավորապես սխալ է գրվել չափաբաժնի համարը:*

*Ստացել եմ գրություն սխալը ուղղելու վերաբերյալ: Սակայն, քաղաքում չլինելու պատճառով չեմ կարողացել կատարել նշված ուղղումը համակարգիչ և card reader ձեռքիս տակ չլինելու պատճառով:*

*Այնուհետև կապնվել եմ նախարարության համապատասխան աշխատակցի՝ Արսեն Սողոմոնյանի հետ և պարզել, որ անկախ այդ վրիպակից չեմ անցել հաջորդ փուլ իմ առաջարկած գնի բարձր լինելու պատճառով: Այսինքն իմ կողմից վրիպակի չուղղելը չի ազդել մրցույթի արդյունքների վրա:*

*Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ արդեն երկար տարիներ մասնակցել եմ պետական կառույցների կողմից բացվող նմանատիպ հրավերների և աշխատել եմ և հիմա էլ աշխատում եմ ֆինանսների, արտաքին գործերի, սփյուռքի և նույն կրթության նախարարությունների, սոցիալական ապահովության ծառայության, բազմաթիվ բանկերի և այլ պետական կառույցների հետ: Մինչ այսօր չեմ ունեցել որևէ բողոք կապված մեր կողմից մատուցվող ծառայությունների հետ:*

*Ուստի խնդրում եմ, հաշվի առնել վերը նշվածը և այդ փոքր վրիպակի պատճառով մեր կազմակերպությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»*:

**4. <u>ՍՑ-LO-2021/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերումը, որը խմբավորված է «1» չափաբաժնում:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սպասարդ» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել «շրյակա միջավայրի նախարարության կողմից» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման 7-րդ չափաբաժնին: Միաժամանակ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սպասարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում՝ դիմում-հայտարարության մեջ սխալ է նշված եղել չափաբաժնի համարը:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Սպասարդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի arman_gevorgyan@yahoo.com էլ. փոստի հասցեին:

viii. Հանձնաժողովը 27.05.2021թ.-ին արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և որոշել է «Սպասարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9257-2021 գրությամբ «Սպասարդ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով:

Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերումը, որը խմբավորված է «1» չափաբաժնում: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սպասարդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել «շրյակա միջավայրի նախարարության կողմից» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնանշման հարցման 7-րդ չափաբաժնին: Միաժամանակ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/39» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին

համապատասխան ներկայացնում է հայտ: Հանձնաժողովի 25.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սպասարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում՝ դիմում-հայտարարության մեջ սխալ է նշված եղել չափաբաժնի համարը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Սպասարդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի arman_gevorgyan@yahoo.com էլ. փոստի հասցեին: Սակայն Հանձնաժողովի կողմից 27.05.2021թ.-ին արձանագրվել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և որոշում է կայացվել «Սպասարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է,

որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Գործադիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, այն համադրելով Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1-ի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի 25.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությունը և շտկման վերաբերյալ ուղարկված ծանուցումը, փաստում է, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների խախտում, այն է՝ չի արձանագրվել Մասնակցի կողմից Հավելված 1-ում առկա այլ անհամապատասխանություն, այն է՝ վերջինիս կողմից նշված «*շրջակա միջավայրի նախարարության կողմից*» բառերը: Այլ կերպ ասած՝ Հրավերով սահմանվել է *«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից»* բառերը, իսկ Մասնակցի կողմից նշվել է նաև «*շրջակա միջավայրի նախարարության կողմից*» բառերը, որը, նույնպես, ելնելով հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանության տրամաբանությունից, ենթակա էր արձանագրման և շտկման:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտի թիվ 1.1 հավելվածում չարձանագրելով նաև այլ անհամապատասխանություններ գործել է ոչ իրավաչափ, ուստի Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտում անհամապատասխանությունները շտկելու մասին և դրա արդյունքում վերջինիս հայտը

մերժելու մասին կայացված որոշումները չեն բխում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք

ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Զարգացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունները պետք է լինեն ամբողջական և ելնեն Օրենքով, Կարգով և Հրավերով սահմանված դրույթներից, որպիսի պայմաններում միայն հնարավոր կլինի փաստել Մասնակցի կողմից թույլ տված խախտման առկայությունն ու այն քննության առնել: Իսկ այն դեպքերում, երբ թեկուզ ակներև առկա է մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, սակայն այդ խախտումը թույլ է տրվել Հանձնաժողովի կողմից իրականացված ոչ իրավաչափ և/կամ ոչ ամբողջական, թերի գործողությունների հետևանքով, ապա Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցները չեն կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Սպասարդ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9257-2021 գրությամբ «Սպասարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/149 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**